



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<29 հուլիս>> 2011թ.

N 257 - Ա

ք. Արմավիր

ԶԵՄՖԻՐԱ ՄԱՐՏՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի վեցերորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի 2011 թվականի հուլիսի 29-ի զեկուցագիրը.

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր չստանալու պատճառով լուծել «Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Զեմֆիրա Մարտոյանի հետ 2005 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 5 աշխատանքային պայմանագիրը:
2. «Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Զեմֆիրա Մարտոյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի օգոստոսի 2-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ